ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 սեպտեմբերի շաբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

115
(3324)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը սեպտեմբերի 9-ին գրել էր, որ ՀՀ անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Արմեն Գրիգորյանը նոր աշխատանքի է անցել: Միջազգային զարգացման խորհրդատվական ընկերությունը՝ Policy and Management Consulting Group-ը (PMCG), սեպտեմբերի 9-ին իր պաշտոնական էջում հայտնել էր, որ Գրիգորյանը միացել է ընկերությանը որպես ավագ խորհրդական (Senior Advisor):

Այս անգամ ներկայացնում ենք, թե ինչ ընկերություն է PMCG-ն եւ ինչ գործունեություն է իրականացնում: PMCG-ն ներկայանում է որպես միջազգային զարգացման խորհրդատվական ընկերություն, որը գործունեություն է իրականացնում անցումային եւ զարգացող երկրներում: Ընկերությունը փոխկապակցված կառույցների ցանց ունի ԱՄՆ-ում, Վրաստանում, Ուկրաինայում, Հայաստանում, Ուզբեկստանում, Լեհաստանում եւ Իռլանդիայում: Ընկերության հայկական գրասենյակը գտնվում է Երեւանում: Ընկերությունը աշխատում է պետական կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների եւ մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ: PMCG-ի հիմնական ուղղություններից են քաղաքականության մշակման խորհրդատվությունը, ինստիտուցիոնալ եւ կազմակերպական զարգացումը, գործառնական արդյունավետության բարձրացումը, մոնիթորինգն ու գնահատումը, ինժեներական խորհրդատվությունը, բիզնեսի զարգացման խորհրդատվությունը, հետազոտությունները եւ կարողությունների զարգացումը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ուսումնասիրել պետական պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների, դրամական միջոցների եւ այլ ֆինանսական տվյալների վերաբերյալ հայտարարագրերը: Այսուհետ մեր ուշադրության կենտրոնում են լինելու նաեւ դատավորների հայտարարագրերը՝ հանրությանը ներկայացնելու համար, թե ինչ ունեցվածք, եկամուտներ, դրամական միջոցներ, փոխառություններ եւ վարկային պարտավորություններ ունեն նրանք: Այս անգամ ուսումնասիրել ենք Երեւանի քաղաքացիական դատարանի դատավոր Աշոտ Հովհաննիսյանի ունեցվածքը: Պաշտոնը ստանձնելու պահին Աշոտ Հովհաննիսյանի հայտարարագրում անշարժ գույք եւ տրանսպորտային միջոցներ նշված չեն: 2021 թվականին պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ ներկայացված հայտարարագրում Աշոտ Հովհաննիսյանը հայտարարագրել է ընդհանուր 109 մլն 651 հազար 933 դրամի եկամուտ: Այդ գումարից 64 մլն 347 հազար դրամը կազմել է գույքի օտարումից ստացված եկամուտը: Բացի այդ, «Արդշինբանկ» ՓԲԸ-ից ստացված փոխառությունների տեսքով հայտարարագրվել է 37 մլն 949 հազար 950 դրամ, որից 500 հազար դրամը եւ 37 մլն 449 հազար 950 դրամը նշված են առանձին գործարքներով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի նախկին խորհրդական Արշակ Օրդուխանյանը կալանավորված էր, սակայն այժմ կալանքը կրում է տանը: Ավելի վաղ հայտնել էինք, որ Օրդուխանյանը կալանավորվել է հանցավոր կազմակերպություն ստեղծելու եւ հափշտակության գործերով: ArmLur.am-ը դիմել էր ՀՀ քննչական կոմիտե՝ պարզելու, թե ՔՊ-ական Արշակ Օրդուխանյանի վերաբերյալ ինչ քրեական վարույթ է քննվում ՀՀ քննչական կոմիտեում, եւ ինչ կարգավիճակ ունի նա: Ի պատասխան՝ ՀՀ քննչական կոմիտեից հայտնել էին. «Մեկ անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասով (հանցավոր կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը) եւ 257-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (հանցավոր կազմակերպության կողմից առանձնապես խոշոր չափերով կատարված համակարգչային հափշտակությունը): Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հոկտեմբերի 25-ին կայանալիք ՏԻՄ ընտրությունները իշխանության համար հատկապես կարեւոր նշանակություն են ունենալու Սյունիքի մարզում: Հոկտեմբերի 25-ին համամասնական ընտրություններ են անցկացվելու Սյունիքի Գորիս, Կապան եւ Մեղրի համայնքներում: Ընտրական ցուցակների գրանցման գործընթացը նախատեսված է սեպտեմբերի 20-25-ը: Մեր տեղեկություններով՝ իշխանական թիմում Սյունիքի ընտրություններին առանձնահատուկ ուշադրություն են դարձնում: ՔՊ-ի համար այստեղ խնդիրը պարզապես հերթական համայնքային ընտրությունը չէ. իշխանությունը ցանկանում է հնարավորինս վերահսկելի ու կանխատեսելի արդյունք ապահովել՝ հատկապես Գորիսում: Եւ հենց այստեղ է ամենաուշագրավ զարգացումը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Գորիսում ՔՊ-ն պատրաստվում է համագործակցել գործող համայնքապետ Առուշ Առուշանյանի հետ: Քննարկվող տարբերակի համաձայն՝ ձեւավորվելու է միասնական քաղաքական թիմ կամ դաշինք, որի ցուցակը գլխավորելու է Առուշանյանը: Սա, ըստ էության, քաղաքական ուշագրավ շրջադարձ է:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԵՐԿՈՒ ԼՐԻՎ ՏԱՐԲԵՐ ԿԵՐՊԱՐՆԵՐ ԵՆ»

ArmLur.am-ը զրուցել է «Հեղափոխության դահճաղաներ» ՀԿ ղեկավար Հայկ Ստեփանյանի հետ:

- Նախօրեին Նիկոլ Փաշինյանը հետաքրքիր միտք արտահայտեց՝ անդրադառնալով Արմեն Գրիգորյանի՝ հեղափոխության մասին նոր գրքին: Նիկոլ Փաշինյանը նշել է, որ 2018-ից հետո հաճախ մտածել է՝ Հայաստանին նոր հեղափոխություն է պետք: Դուք, ճանաչելով նրան եւ նրա հետ ճանապարհ անցնելով, ինչպե՞ս եք մեկնաբանում այս հայտարարությունը: Արդյո՞ք սա նշանակում է, որ Փաշինյանը պատրաստվում է նոր հեղափոխության:

- Ինձ համար այս հայտարարությունն առանձնահատուկ է: Կարծում եմ՝ Փաշինյանի՝ նոր հեղափոխության մասին միտքը նախեւառաջ իր իշխանության ու ութ տարվա քաղաքականության գնահատականն է: Չեմ բացառի, որ նա փորձի կրկին ստանձնել ընդդիմադիրի դեր եւ հեղափոխություն իրականացնել գործող իշխանության դեմ: Սակայն այստեղ նրան լուրջ հիասթափություն է սպասվում, որովհետեւ նա թերագնահատում է ժողովրդին. ութ տարի երկիրը ղեկավարելուց հետո դժվար է հասարակությանը համոզել, թե իշխանությանը որեւէ մեկը դիմադրում է:

- Այսինքն՝ Դուք կանխատեսո՞ւմ եք, որ Փաշինյանը կարող է փորձել իշխանության ներսում փոփոխություններ իրականացնել՝ նույնիսկ իր կողմից նշանակված կադրերի դեմ դուրս գալով:

- Փաշինյանի կերպարն այնպիսին է, որ իշխանությանը կամ իր վարկանիշին խանգարող ցանկացած մարդու կարող է հեռացնել՝անկախ նրանից, թե ով է նա: Վերջին օրինակներից մեկը Հայկ Սարգսյանի եւ նրա եղբոր հեռացումն է: Եթե Փաշինյանը պատրաստ է հեռացնել անգամ իր ամենահավատարիմ մարդկանց, ապա ո՞վ ենք մենք, որ կարծում ենք՝ մեզ հետ նույնը չի կարող անել: Անկեղծ ասած՝ 2018-2023 թվականների Փաշինյանին, եթե ցույց տային այսօրվա Փաշինյանին, ես նրա կողքով անգամ չէի անցնի: Ինձ համար դրանք երկու լրիվ տարբեր կերպարներ են:

- Բայց այստեղ մեկ այլ կարեւոր հարց է առաջանում. ո՞ր Նիկոլ Փաշինյանն էր իրական՝ այն, որի հետ Դուք 2018 թվականին գնացիք հեղափոխության, թե՞ այն, որին այսօր քննադատում եք:

- Սա շատ կարեւոր հարց է: 2018 թվականի իրադարձությունների մասին այսօր տարբեր գնահատականներ են հնչում. մեկը դրանք հեղափոխություն է անվանում, մյուսը՝ իշխանափոխություն, երրորդը՝ նույնիսկ այլ բնորոշումներ է տալիս: Բայց ես ուզում եմ նայել հենց ժողովրդի տեսանկյունից: Մարդիկ փողոց դուրս չէին եկել որեւէ մեկի պատվերով կամ պարզապես իշխանություն փոխելու համար: Նրանք դուրս էին եկել տարիներով կուտակված դժգոհության, անարդարության եւ անհավասարության պատճառով: Այդ մարդիկ իսկապես ուզում էին հեղափոխություն: Ուրիշ հարց է, թե հետագայում Նիկոլ Փաշինյանն ինչ արեց այդ հեղափոխության հետ: Դա արդեն իր պատասխանատվությունն է: Այսօր՝ ութ-ինը տարի անց, մենք փաստացի նորից հասել ենք այն զրոյական կետին, որի մասին ինքն է խոսում: Եւ նա հասկանում է, որ ժողովուրդը կարող է կրկին պահանջել լուծումներ: Դրա համար էլ փորձում է այդ գործընթացը վերցնել իր վրա: Բայց ես կարծում եմ՝ դա նրան չի հաջողվելու: Չի կարելի անընդհատ մարդկանց խաբել: Մեր ժողովուրդը հիմար չէ:

Գուցե որոշակի ժամանակահատվածում մենք թմբիրի մեջ էինք: Տեղեկատվական եւ մեդիա արշավները, այդ թվում՝ արհեստական բանականության միջոցով տարածվող նյութերը, մարդկանց մեջ որոշակի շիլաշփոթ ստեղծեցին: Բայց ժամանակի ընթացքում այդ ամենը նստում է, եւ իրական պատկերն ավելի հստակ է դառնում: Կարծում եմ՝ հիմա այն ժամանակն է, երբ մարդիկ պետք է վերադառնան իրենց իրական պատկերացումներին եւ հասկանան՝ ի՞նչ տեղի ունեցավ մեր երկրի եւ մեր ժողովրդի հետ: Ես վստահ եմ՝ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը հավերժ չի լինելու: Ինչքան էլ փորձեն իշխանությունը պահել բռնապետական մեթոդներով, միեւնույն է՝ այդ իշխանությունը պետք է ավարտվի, եւ իշխանությունը պետք է վերադարձվի ժողովրդին, որպեսզի ժողովուրդն իրապես որոշի իր ապագան:

- Ժամանակին, երբ Դուք հեղափոխության պահապանների կազմում էիք, Փաշինյանին վիրավորողները ստիպված էին ներողություն խնդրել: Այսօր Դուք նրա հասցեին կոշտ ձեւակերպումներ եք անում: Եթե դրա համար Ձեզանից եւս ներողություն պահանջեն, այդ թվում՝ դատական կարգով, ինչպե՞ս կվերաբերվեք:

- Իրավական առումով կարծում եմ՝ որեւէ հիմք չկա ինձ ինչ-որ բան պարտադրելու: Իմ խոսքը քաղաքական գնահատական է, եւ ես պատրաստ եմ այն պաշտպանել ցանկացած վայրում: Ինչ վերաբերում է 2018-2023 թվականներին, այն ժամանակ մենք պաշտպանում էինք ոչ միայն Փաշինյանին, այլ հեղափոխության գաղափարն ու ժողովրդի կամքով ձեւավորված իշխանությունը: Եթե այդ տարիներին ստեղծվեին ամուր պետական ինստիտուտներ, այսօր խոսքը ոչ թե անձի, այլ այդ ինստիտուտների պաշտպանության մասին կլիներ:

- Այսինքն՝ այսօր հետադարձ հայացքով չե՞ք զղջում, որ այդ ժամանակահատվածում ամեն կերպ փորձում էիք պաշտպանել Նիկոլ Փաշինյանին:

- Իհարկե, մեր մասով ունենք հստակ դիրքորոշում: Այո՛, եթե մենք այն ժամանակ կարողանայինք տեսնել այն ամենը, ինչ տեղի է ունենալու հետագայում, շատ բաներ գուցե այլ կերպ անեինք: Մենք գնացել էինք մի գաղափարի հետեւից, որը մեր պատկերացումների մեջ կար, բայց հետագայում պարզվեց, որ այդ ամենը կարող էր չհամապատասխանել Նիկոլ Փաշինյանի իրական ծրագրերին: Միաժամանակ ես վստահ եմ, որ նրա այսօրվա թիմում էլ կան մարդիկ, որոնք շատ բաների մասին տեղյակ չեն: Կան մարդիկ, որոնք իսկապես կարծում են, որ լավ բան են անում եւ ցանկանում են լավ բան անել երկրի համար: Բայց քաղաքականությունը գնահատվում է ոչ միայն մտադրություններով, այլեւ արդյունքներով: Եւ այսօր մենք պետք է կարողանանք հասկանալ՝ ինչ արդյունք ենք ստացել, ինչ ճանապարհ ենք անցել եւ դեպի ուր ենք գնում:

Զրուցեց՝ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՈՐ Է ՎԱՂԻՆԱԿ ՎԱՐԴԱՆՈՎԸ

ArmLur.am-ը ավելի վաղ հայտնել էր, որ ԱԺ «Ուժեղ Հայաստան» խմբակցությունը ԱԺ պատգանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահի պատգոնում առաջադրել է Վաղինակ Վարդանովի թեկնածությունը: Այս ֆոնին ArmLur.am-ը ներկայացնում է, թե ով է նա:

Վաղինակ Վլադիմիրի Վարդանովը ծնվել է 1994 թվականի մայիսի 11-ին Երեւանում: Նա 2026 թվականի հունիսի 7-ին ԱԺ պատգամավոր է ընտրվել «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի համապետական ընտրական ցուցակով: Օգոստոսի 2-ից նա «Ուժեղ Հայաստան» խմբակցության անդամ է, իսկ սեպտեմբերի 4-ից ընդգրկվել է ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի կազմում:

Վաղինակ Վարդանովը 2015 թվականին ավարտել է Երեւանի պետական համալսարանի մաթեմատիկայի եւ մեխանիկայի ֆակուլտետը, իսկ 2017 թվականին՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝ ստանալով մագիստրոսի որակավորում:

2017-2020 թվականներին նա ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2017-2018 թվականներին մասնակցել է Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական համալսարանի մեկամյա սպայական դասընթացին՝ ստանալով փոքր ու միջին ՀՕՊ համակարգերի մասնագետի որակավորում: Նա պահեստազորի ավագ լեյտենանտ է եւ մասնակցել է 44-օրյա պատերազմին: 2022 թվականին պարգեւատրվել է Մարտական ծառայության մեդալով:

2022-2026 թվականներին Վաղինակ Վարդանովը եղել է «Ողջ մնալու արվեստ» ռազմահայրենասիրական կազմակերպության փոխտնօրենը: Հատկանշական է, որ նրա հայրը՝ Վլադիմիր Թեւանի Վարդանովը, առավել հայտնի որպես Վովա Վարդանով, «Ողջ մնալու արվեստ» կազմակերպության հիմնադիրն է: Վովա Վարդանովը հետախույզ, ազատամարտիկ, հասարակական եւ ռազմական գործիչ է:

Վաղինակ Վարդանովն ամուսնացած է, ունի երկու զավակ:

Հիշեցնենք, որ ապրիլին նախընտրական փուլում Սամվել Կարապետյանի աջակիցների ակցիայից 17 մարդ էին ձերբակալել եւ նրանց թվում էր նաեւ Վաղինակ Վարդանովը:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԸՆԴՈՒՆԵԼ Է

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ռուբեն Ռուբինյանը սեպտեմբերի 10-ին ընդունել է Լեհաստանի արտաքին գործերի նախարարության պետքարտուղար, Սեյմի պատգամավոր Մարչին Բոսացկիի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը պատվիրակության կազմում մասնակցել է նաեւ Լեհաստանի Սեյմի Լեհաստան-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Լուցիան Պիետժչիկը: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Հայաստան-Լեհաստան բազմաոլորտ համագործակցության ընթացքին, դրա հետագա զարգացմանն ու ընդլայնման հնարավորություններին, ինչպես նաեւ տարածաշրջանային մի շարք հարցերի:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը հանդիպել է Հարավային Կովկասի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Մագդալենա Գրոնոյի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Ադրբեջան-ԵՄ համագործակցության օրակարգի առանցքային հարցերը, երկկողմ գործընկերության զարգացման հեռանկարները, տարածաշրջանում տիրող իրավիճակը, ինչպես նաեւ տարածաշրջանային խաղաղության եւ կայունության ամրապնդմանն ուղղված քայլերը: Տեղեկատվություն է տրամադրվել Հարավային Կովկասում խաղաղության եւ անվտանգության ապահովման, ինչպես նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման եւ վստահության ամրապնդման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի վերաբերյալ: Շեշտվել է այս օգոստոսին Բիշքեկում Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների միջեւ կայացած հանդիպման ընթացքում տեղի ունեցած քննարկումների կարեւորությունը տարածաշրջանային խաղաղության օրակարգի առաջխաղացման համար: Կողմերը նաեւ մտքեր են փոխանակել տարածաշրջանում էներգետիկայի եւ հաղորդակցության ոլորտում ընթացող աշխատանքների, ինչպես նաեւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ երկկողմ եւ տարածաշրջանային հարցերի վերաբերյալ:

ՀԱՆԴԻՊԵԼ Է

Հայաստանի վարչապետի աշխատակազմի ղեկավար Լիլիթ Մակունցը հանդիպել է Լեհաստանի արտաքին գործերի նախարարության պետքարտուղար Մարչին Բոսացկիի հետ: ՀՀ վարչապետի աշխատակազմից հայտնում են, որ Լիլիթ Մակունցը բարձր է գնահատել Լեհաստանի շարունակական աջակցությունը Հայաստանի ժողովրդավարական բարեփոխումներին, ինստիտուցիոնալ զարգացմանը եւ Հայաստան-ԵՄ հարաբերությունների ամրապնդմանը: Կողմերը քննարկել են Հայաստան-Լեհաստան երկկողմ հարաբերությունների զարգացմանը, Հայաստան-Եվրոպական միություն գործընկերության խորացմանը, ինչպես նաեւ Հայաստանի եվրոպական օրակարգի առաջմղմանն առնչվող հարցեր: Մարչին Բոսացկին իր հերթին ընդգծել է լեհական կողմի պատրաստակամությունը՝ շարունակելու աջակցությունը Հայաստանի բարեփոխումների օրակարգին եւ խորացնելու համագործակցությունը երկկողմ, ինչպես նաեւ Հայաստան-ԵՄ ձեւաչափերում: Զրուցակիցները կարեւորել են փոխգործակցության եւ երկխոսության շարունակականությունը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ

Ադրբեջանը կշարունակի լրացուցիչ ջանքեր գործադրել տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատման եւ ամրապնդման ուղղությամբ: Այս մասին հայտարարել է Ադրբեջանի նախագահի օգնական, նախագահի աշխատակազմի արտաքին քաղաքականության հարցերով բաժնի ղեկավար Հիքմեթ Հաջիեւը՝ Խանքենդիի մշակույթի կենտրոն այցելած դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներին ուղղված ելույթում:

Հաջիեւի խոսքով՝ Ադրբեջանում ներկայում սովորում են ապրել խաղաղության պայմաններում եւ առաջ շարժվել այդ ուղղությամբ: Նա նշել է, որ խաղաղությունը միայն հակամարտության բացակայությունը չէ, այլ նաեւ խաղաղաշինություն, վստահության ձեւավորում եւ վերականգնման ու վերակառուցման գործընթաց:

«Ես նաեւ ուրախ եմ, որ Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդների վերջին հանդիպումն անցել է շատ կառուցողական մթնոլորտում»,- ասել է Հաջիեւը:

Նրա խոսքով՝ երկու կողմերը պայմանավորվել են սկսել երկկողմ համագործակցություն՝ խաղաղության օրակարգի հետագա առաջմղման, երկու երկրների միջեւ վստահության ամրապնդման, ինչպես նաեւ առեւտրային կապերի զարգացման նպատակով: Խոսքը, մասնավորապես, տրանսպորտային փոխկապակցվածության եւ երկու երկրների, ինչպես նաեւ ավելի լայն տարածաշրջանի միջեւ հաղորդակցությունների զարգացման մասին է:

Հաջիեւը նաեւ գոհունակություն է հայտնել եռակողմ հայեցակարգի զարգացման հարցում առկա դրական նշանների կապակցությամբ եւ շնորհակալություն հայտնել ամերիկացի գործընկերներին՝ այդ ծրագրի իրականացմանը լիակատար նվիրվածության համար:

Ա. Վ.

ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Ուզբեկստանի նախագահ Շավքաթ Միրզիյոեւի հետ: Այս մասին հայտնում են Կառավարությունից: Վերջինս շնորհավորել է Նիկոլ Փաշինյանին՝ Հ�հ վարչապետի պաշտոնում վերանշանակվելու առիթով եւ մաղթել հաջողություններ՝ ի նպաստ Հայաստանի հետեւողական զարգացման:

Զրուցակիցները քննարկել են Հայաստան-Ուզբեկստան հարաբերությունների հետագա առաջմղմանը եւ երկկողմ օրակարգին վերաբերող հարցեր: Կարեւորվել է առեւտրատնտեսական կապերի ընդլայնման ուղղությամբ հետեւողական քայլերի իրականացումը:

Մտքեր են փոխանակվել նաեւ տարածաշրջանային գործընթացների, այդ թվում՝ հաղորդակցությունների ապաշրջափակման ուղղությամբ իրականացվող աշխատանքների շուրջ:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

3 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ, 2 ԱՎՏՈՄԵՔԵՆԱ, 32 ՄԼՆ ԴՐԱՄ ԵԿԱՄՈՒՏ

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ուսումնասիրել դատավորների ունեցվածքը: Այս անգամ ուսումնասիրել ենք Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Վահագն Թորոսյանի՝ 2025 թվականի տարեկան հայտարարագիրը:

Վահագն Թորոսյանը դատավորի պաշտոնը զբաղեցնում է 2023 թվականի հունիսի 8-ից:

Անշարժ գույք

2025 թվականի սկզբի դրությամբ Վահագն Թորոսյանի հայտարարագրում առկա են երեք անշարժ գույք՝ երկու ավտոկայանատեղի եւ բազմաբնակարան բնակելի շենքում գտնվող գույք: Բոլոր երեք գույքերը համատեղ սեփականության իրավունքով են եւ ձեռք են բերվել 2024 թվականին՝ երկուսը՝ փետրվարի 20-ին եւ 21-ին, իսկ բազմաբնակարան շենքի գույքը՝ փետրվարի 21-ին: Տարեվերջին երեք գույքերն էլ պահպանվել են:

Բացի այդ, դատավորը հայտարարագրել է Երեւան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում բնակարան, որը 2025 թվականի ընթացքում փաստացի տիրապետել է 90 եւ ավելի օր:

Ավտոմեքենաներ

Դատավորի անվամբ տարեսկզբին եւ տարեվերջին առկա են եղել երկու ավտոմեքենա՝ 2018 թվականի Chevrolet եւ 2001 թվականի Nissan: Chevrolet-ը նա ձեռք է բերել 2024 թվականի հոկտեմբերի 24-ին, իսկ Nissan-ը՝ դեռեւս 2014 թվականի հուլիսի 4-ին: 2025 թվականին նոր մեքենա ձեռք բերելու կամ առկա մեքենաներից որեւէ մեկը օտարելու մասին հայտարարագրում տվյալներ չկան:

Բաժնետոմսեր

Վահագն Թորոսյանը հայտարարագրել է նաեւ երկու բաժնետոմս: Առաջինը ձեռք է բերվել 2005 թվականի հունիսի 3-ին, դրա արժեքը 97 հազար 500 դրամ է: Երկրորդը ձեռք է բերվել 2014 թվականի ապրիլի 22-ին՝ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ից, եւ դրա արժեքը կազմում է 30 մլն 902 հազար 940.3 դրամ: Երկու ներդրումների արժեքն էլ տարվա սկզբի եւ վերջի դրությամբ մնացել է անփոփոխ:

Ավանդներ եւ դրամական միջոցներ

Դատավորը երեք բանկային ավանդ է հայտարարագրել: Դրանցից երկուսը տարվա սկզբին եւ վերջում կազմել են 50-ական հազար ԱՄՆ դոլար, իսկ երրորդը՝ 30 հազար դրամ:

Բանկային հաշիվների մնացորդների մասով տարեվերջին նա ունեցել է 1 հազար 607.56 դոլար, 4 հազար 930 դոլար, 366 հազար 739 դրամ եւ 1 մլն 200 հազար դրամ:

Կանխիկ դրամական միջոցները նույնպես աճել են: Տարվա սկզբի դրությամբ դատավորը հայտարարագրել էր 1 հազար 500 եվրո, 5 հազար ԱՄՆ դոլար եւ 10 մլն դրամ, իսկ տարեվերջին՝ արդեն 9 հազար 500 եվրո, 10 հազար ԱՄՆ դոլար եւ 12.5 մլն դրամ:

Եկամուտ

2025 թվականին Վահագն Թորոսյանը հայտարարագրել է ընդհանուր 32 մլն 311 հազար 075 դրամ եկամուտ:

Դրանից 14 մլն 396 հազար 691 դրամը կազմել է աշխատանքի վարձատրությունը եւ դրան հավասարեցված այլ վճարումները, որոնք ստացել է Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմից՝ Դատական դեպարտամենտից:

Նա 14 մլն 200 հազար դրամ ստացել է նվիրատվության կամ օգնության կարգով՝ Ռիմա Ներսեսի Թորոսյանից: Բացի այդ, Ամիոբանկ ՓԲԸ-ից ստացված փոխառությունների կամ բանկային ավանդների դիմաց տոկոսը եւ այլ հատուցումը կազմել է 5 հազար 400 ԱՄՆ դոլար, իսկ եկամտային հարկի վերադարձը՝ 1 մլն 650 հազար դրամ: ՀՀ ֆինանսների նախարարությունից որպես այլ եկամուտ հայտարարագրվել է եւս 72 հազար դրամ:

Վարկ

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Վահագն Թորոսյանի վարկային պարտավորությունների ընդհանուր մնացորդը կազմել է 15 մլն 731 հազար 700 դրամ: Հայտարարագրում նշված է երկու պարտավորություն՝ համապատասխանաբար 300 հազար դրամ եւ 15 մլն 431 հազար 700 դրամ, որոնցից երկրորդը կապված է բնակարանի հետ:

2025 թվականին դատավորը վարկի մարմանն ուղղված վճարումների համար կատարել է 2 մլն 520 հազար դրամի ծախս:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՀԱՏԿԱՑՎԻ 270 ՄԼՆ ԴՈԼԱՐ

Օտտավան Կիեւին կտրամադրի 2 միլիարդ կանադական դոլարի (մոտ 1,5 մլրդ ԱՄՆ դոլար) օգնություն, հայտարարել է Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին, որը Կալգարիում հանդիպել է Կանադայի վարչապետ Մարկ Քարնիի հետ: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդագրություն է տարածել Ուկրաինայի նախագահի գրասենյակը:

Զելենսկին հանդիպման ժամանակ շնորհակալություն է հայտնել Կանադային ՌԴ-ի դեմ պատերազմի ընթացքում տրամադրված աջակցության փաթեթների համար: Նա հայտարարել է, որ Քարնիի հետ հանդիպման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ Ուկրաինան կստանա 2 միլիարդ կանադական դոլարի օգնություն, այդ թվում՝ Patriot համակարգերի հրթիռների, F-16 կործանիչների զինամթերքի, անօդաչու թռչող սարքերի համատեղ արտադրության եւ էներգետիկայի համար:

Իր հերթին, Քարնին հայտարարել է, որ Կանադան շարունակում է աջակցել Ուկրաինային՝ ֆինանսավորելով զենքի գնումները, մասնավորապես JUMPSTART մեխանիզմի շրջանակում: Ըստ «ՌԲԿ-Ուկրաինա» պարբերականի՝ նա նշել է, որ Կանադան 350 միլիոն կանադական դոլար (մոտավորապես 270 միլիոն ԱՄՆ դոլար) է հատկացնում Ուկրաինայի համար հակաօդային պաշտպանության համակարգերի համար կալանիչ հրթիռների գնմանը:

«Կանադան եւ Ուկրաինան վերջնականացրել են JUMPSTART մեխանիզմի միջոցով կարեւորագույն օդային կալանիչներ ձեռք բերելու համաձայնագիրը: Այս սարքավորումների փաթեթը, որի արժեքը 350 միլիոն դոլար է, կօգնի պաշտպանել Ուկրաինայի ժողովրդին, երկրի ենթակառուցվածքները եւ նրա երկինքը», - ասել է նա:

Քարնին հավելել է, որ Կանադան նաեւ միջոցներ կհատկացնի Ուկրաինայի էներգետիկ աջակցության հիմնադրամին, վարկային երաշխիքներ կտրամադրի 430 միլիոն կանադական դոլարի (մոտավորապես 330 միլիոն ԱՄՆ դոլար) չափով՝ ձմռանն Ուկրաինայի կողմից բնական գազի ձեռք բերման նպատակով:

«Բացի այդ, մենք սերտորեն կհամագործակցենք էներգետիկայի եւ կրիտիկական նշանակության հանքանյութերի ոլորտներում՝ մատակարարման հուսալի շղթաներ ապահովելու համար», - հստակեցրել է նա:

Քարնիի խոսքով՝ Կանադան նաեւ սերտորեն համագործակցում է եվրոպացի դաշնակիցների հետ՝ ուկրաինացի վետերաններին աջակցելու նպատակով համատեղ հիմնադրամ ստեղծելու ուղղությամբ:

Ուկրաինան եւ Կանադան Զելենսկու այցի ժամանակ ստորագրել են նաեւ 100-ամյա գործընկերության մասին հռչակագիր, որը երկկողմ հարաբերությունները բարձրացնում է համապարփակ ռազմավարական դաշինքի մակարդակի:

ՆՈՐ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ

Իրանի ԱԳՆ-ն Դավուդ Յայիջին նշանակել է նոր գլխավոր հյուպատոս Կապանում: Իրանի նոր գլխավոր հյուպատոսը Կապանում Հայաստան մեկնելուց առաջ հանդիպել է Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչիի հետ եւ ներկայացրել է նոր պաշտոնում աշխատանքի ծրագիրը: Իրանի ԱԳ նախարարության ղեկավարը Յայիջիին հաջողություն է մաղթել նոր պաշտոնում: Յայիջին փոխարինել է Մորթեզա Աբեդին Վարամինին:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ԿԿԱՅԱՑՎԻ

«ԳՆԴԱԿԸ» ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆԻ ԴԱՇՏՈՒՄ Է

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն կալանավորված ոստիկանի եւ բիզնեսմենների միջադեպի գործով հարցաքննել է մոտ 20-ից ավելի անձի եւ առերեսվել են 15-ից ավելի անձինք:

Նախաքննական մարմինը ավարտել է հարցաքննությունների ու առերեսումների հիմնական գործողությունների շարքը եւ հիմա գնդակը Հակակոռուպցիոն կոմիտեի դաշտում է, թե ինչու են մինչ օրս անպատիժ մնացել Երեւան քաղաքի վարչության պետ Ռաֆայել Վարդանյանը եւ նրա հետ ոստիկանին բռնության ենթարկած քննիչները: Ասել է թե, նախաքննական մարմինը մոտ օրերս որոշում պետք է կայացնի եւ ոստիկանի խափանման միջոց կալանքը փոխելու եւ նրա նկատմամբ բռնություն կիրառած ոստիկանների մասով:

Հայտնել էինք, որ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի վարչության պետ Ռաֆայել Վարդանյանին կանչել են կրկին Հակակոռուպցիոն կոմիտե եւ առերեսել կալանավորված ոստիկանի հետ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ առերեսումը տեւել է մոտ 4 ժամ եւ հիմա գնդակը հակակոռուպցիոն կմոիտեի դաշտում , որ ակտիվ քննություն է իրականացրել եւ պետք է որոշում կայացնի : Իսկ ինչ էր եղել: Բանն այն է, որ երկու ուժային կառույցները՝ ՆԳՆ ոստիկանությունն ու Քննչական կոմիտեն, բախվել են իրար, եւ առայժմ հաղթում է քննչականը:

ArmLur.am-ը հայտնել էր, որ Հակակոռուպցիոն կոմիտեում ակտիվ քննություն է ընթանում Քննչական կոմիտեում ոստիկանին խոշտանգելու դեպքով: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտե է հրավիրվել եւ հարցաքննվել ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի վարչության վարչության պետ Ռաֆայել Վարդանյանը:

Հիշեցնենք՝ օգոստոսի 22-ին հայտնել էինք, որ ՆԳՆ ոստիկանության Եղվարդի բաժնի օպերլիազոր Սարգիս Աղասի Բագրատունյանը ծեծի էր ենթարկվել, ու տեւական ժամանակ շտապօգնության աշխատակիցներին թույլ չէին տվել մտնել քննչական վարչություն, դեպքի վերաբերյալ ահազանգ էր ստացել նաեւ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը: Ըստ ոստիկանի հարազատների՝ծեծի անմիջական մասնակից է եղել ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի վարչության վարչության պետ Ռաֆայել Վարդանյանը, եւ հենց նրա մասնակցությամբ են քննիչները ծեծի ենթարկել ոստիկանության աշխատակցին: Ոստիկանության աշխատակից օպերլիազոր Սարգիս Աղասի Բագրատունյանը այս պահին կալանավորված է:

Իսկ ինչն էր եղել միջադեպի պատճառը:

Բանն այն է, որ Մալաթիայի քննչականի մոտ կա ավտոտեխսպասարկման կետ: Կոմիտեի քննիչները մեքենան կայանել են տեխսպասարկման կետի դիմաց, եւ սեփականատերը խնդրել է մեքենաները դուրս հանել, որը վերածվել է թեժ խոսակցության: Արդյունքում, ՆԳՆ ոստիկանության Եղվարդի բաժնի օպերլիազոր Սարգիս Բագրատունյանը, տեղեկանալով, որ իր հարազատը, որը ավտոտեխսպասարկման կետի սեփականատերն է եւ տհաճ խոսակցության մեջ է հայտնվել, փորձել է խնդիրը կարգավորել, սակայն չէր ստացվել, առավել թեժացել էր վիճակը, ու սկսվել էր ծեծկռտուք: Ըստ ոստիկանի հարազատների՝ այս դեպքից հետո ՆԳՆ ոստիկանության Եղվարդի բաժնի օպերլիազոր Սարգիս Աղասի Բագրատունյանին կանչում են քննչական, որտեղ ներկա է լինում ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի վարչության վարչության պետ Ռաֆայել Վարդանյանը ու ծեծի ենթարկում եւ նրա նկատմամբ քրեական գործ է հարուցում: Դեպքին անդրադարձել էր քննչական կոմիտեն՝ հայտնելով, թե իբր քննիչները՝ վարչության պետի մասնակցությամբ, դաժան ծեծի են ենթարկել ոստիկանին, չի համապատասխանում իրականությանը: Ու մինչ քննչականը հերքում էր, գործի անցավ Հակակոռուպցիոն կոմիտեն:

Եղվարդի բաժնի օպերլիազոր Սարգիս Բագրատունյանին ՔԿ ԵՔՎ վարչության պետ Ռաֆայել Վարդանյանի մասնակցությամբ ծեծի ենթարկելու վերաբերյալ հաղորդման հիման վրա քրեական վարույթ նախաձեռնեց: Պաշտոնապես հայտնեցին, որ պաշտոնատար անձանց կողմից խոշտանգում կատարելու առերեւույթ հանցագործության դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ստացվում է՝ ոստիկանության ծառայողին ծեծի են ենթարկել Քննչական կոմիտեի աշխատակիցները, սակայն արդյունքում հենց ոստիկանն է հայտնվել անազատության մեջ: Միջադեպի մյուս կողմի քննիչները շարունակում են ազատության մեջ մնալ: Ըստ փաստաբան Վահե Մարտիրոսյանի՝ իր պաշտպանյալը՝ ոստիկանության ծառայող Սարգիս Բագրատունյանը, քննիչների կողմից ծեծի է ենթարկվել աշխատասենյակում: Փաստաբանը պնդում է, որ նրա հագուստը պատռվել է, մարմնի վրա առկա են եղել վնասվածքներ, իսկ շտապօգնությունը կանչել է հենց ինքը: Մինչդեռ Քննչական կոմիտեն ներկայացնում է հակառակ վարկածը՝ պնդելով, որ ոստիկանը եւ նրա ավելի քան 20 հարազատներ բռնություն են գործադրել քննիչների նկատմամբ եւ խուլիգանական գործողություններ կատարել:

Իսկ ինչու մինչ օրս Երեւան քաղաքի քննչական վարչության պետ Ռաֆայել Վարդանյանը չի պատժվել իր արարքի համար. թերեւս այն պատճառով, որ եղբայրը՝ Ասատուր Վարդանյանը, ՀՀ տարածքային կառավարման փոխնախարարն է՝ Ասատուր Վարդանյանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԴԱՆԱԿԻ ՀԱՐՎԱԾ

Սեպտեմբերի 9-ին սպանության փորձ է տեղի ունեցել Երեւանում: Այդ օրը՝ ժամը 10:20-ի սահմաններում, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երեւանի վարչությունում հերթական օպերատիվ տեղեկություններն են ստացվել, որ պարանոցի հատվածում կտրած վնասվածքով «Արամյանց» բժշկական կենտրոն է տեղափոխվել մի քաղաքացի:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, նշված հիվանդանոց են մեկնել քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երեւանի քրեական վարչության՝մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժնի ծառայողները:

Տեղում պարզվել է, որ տեղեկությունը հավաստի է, բժիշկներն էլ քրեական ոստիկաններին հայտնել են, որ վիրավորը գտնվում է վիրահատարանում եւ ի վիճակի չէ կատարվածի մասին բացատրություն տալու: Մինչ բժիշկները պայքարում են վիրավորի կյանքի համար, Երեւանի քրեական ոստիկանները, ապա նրանց միացած ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնական բաժնի ծառայողները հսկայածավալ օպերատիվ-հետախուզական աշխատանքների արդյունքում Երեւանի քրեական ոստիկանությունում օպերատիվ տեղեկություններ են ստանում, որ վիրավորը Երեւանի բնակիչ 44-ամյա Ռոման Սելիկյանն է:

Քրեական եւ համայնքային ոստիկանները պարզում են նաեւ, որ նույն օրը Մաշտոցի 2/2 եւ Արգիշտի 4/1 հասցեների արանքում կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ Ռ. Սելիկյանի հետ վիճաբանել, ապա պարանոցի հատվածում նրան վնասվածք է պատճառել 50-ամյա Վարդան Դալաքյանը: Քրեական ու համայնքային ոստիկանները տաք հետքերով սպանություն կատարելու հիմնավոր կասկածի առկայությամբ ձերբակալում են Վ. Դալաքյանին եւ տեղափոխում Երեւանի քրեական ոստիկանություն: Փաստերի ճնշման տակ Վ. Դալաքյանը ներկայացրել է նաեւ հանցագործության գործիք դանակը, որից հետո նրան եւ դանակը կազմված փաստաթղթերով ներկայացրել են ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

Դեպքի փաստով սպանության փորձ հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ Ռ. Սելիկյանն աշխատում է «Վիվա Արմենիա»-ում: Թե ինչ հանգամանքներում է տեղի ունեցել վիճաբանությունը, հետո դանակահարությունը, այս պահին նախաքննության շահերից ելնելով չենք հայտնում:

ԼՈՒՐԵՐ

50 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ Է ՀԱՓՇՏԱԿՎԵԼ

Սեպտեմբերի 7-ի առավոտյան ՆԳՆ օպերատիվ կառավարման կենտրոն էր զանգահարել մայրաքաղաքի Վարդանանց փողոցում գտնվող կենդանիների խնամքի սրահի աշխատակիցը:

Ժամը 6-ին մի տղամարդ հարմարեցված գործիքով բացել էր սրահի պատուհանը, մտել ներս, եւ հանդիպել էր աշխատակցի դիմադրությանը, ձեռքից հափշտակել 50 հազար դրամ: Փորձել էր բացել նաեւ սրահի չիրկիզվող պահարանը, սակայն չէր հաջողել ու դիմել էր փախուստի:

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ՝ ավազակության հատկանիշներով: Այս դեպքում էլ արագ արդյունք տվեց Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի եւ տեխնիկական աջակցման բաժինների ծառայողների համագործակցությունը:

Սեպտեմբերի 8-ի երեկոյան Վարդաշեն թաղամասի իր տան մոտ ավազակություն կատարելու կասկածանքով ձերբակալվեց 36-ամյա տղամարդը եւ ներկայացվեց նախաքննական մարմին:

Նախաքննությունը շարունակվում է:

ՀԵՐՈՒՆ՝ 320 ՀԱԶԱՐ ԴՐԱՄՈՎ

Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները հերթական օպերատիվ տեղեկությունն իրացրին օգոստոսի 20-ին: Ժամը 20.40-ին Արարատի մարզի Այնթապ գյուղում թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու եւ իրացնելու կասկածանքով քրեական ոստիկանները ձերբակալեցին Երեւանի բնակիչ 50-ամյա տղամարդու: Իր վարած «Մերսեդեսով» հանդերձ նա տեղափոխվեց համայնքային ոստիկանության Մասիսի բաժին: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց ընդհանուր 6,29 գրամ հերոինով լցված չորս փաթեթ:

Սա օպերատիվ տեղեկության իրացման միայն առաջին փուլն էր: Տեղեկություն կար նաեւ, որ երեւանցուն թմրամիջոցները պարբերաբար իրացրել են Նոր Խարբերդում բնակվող երկու օտարերկրացի տղամարդ:

Մասիսի քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ: Հանցագործության ամբողջ շղթայի բացահայտմանն ուղղված հետագա աշխատանքն իրականացվեց իրավապահների ակտիվ համագործակցությամբ: Լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ու քննչական գործողություններն արդյունք տվեցին օգոստոսի 31-ին: Հատուկ միջոցառման արդյունքում՝ 20 գրամ հերոինը 300 հազար դրամով իրացնելու պահին, 62-ամյա եւ 46-ամյա օտարերկրացիները ձերբակալվեցին:

Դատարանի որոշմամբ խուզարկություն կատարվեց 46-ամյա օտարերկրացու բնակության վայրում: Հայտնաբերվեցին 132 գրամ հերոին, կես գրամ ափիոն, 6,5 հաբ մեթադոն եւ հոգեմետ 20 դեղահաբ: Օտարերկրացիները կալանավորվել են: Նախաքննությունը շարունակվում է:

● *Օգոստոսի 31-ից սեպտեմբերի 7-ը Երեւանում տարբեր կասկածանքներով ձերբակալվել ու համայնքային ոստիկանություն է տարվել 128 անձ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԳՈՐԾ ԱՐՎԵՑ

Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանը սեպտեմբերի 10-ին Ֆեյսբուքի իր էջում տեսանյութ է տեղադրել, դրան կից գրառել, որ Դիլիջանի մշակույթի պալատի շենքում վերանորոգման աշխատանքները վերսկսվել են: Օգոստոսի 29-ին էլ համայնքի ղեկավարը Ֆեյսբուքի իր էջում լուսանկարներ է տեղադրել երկաթյա խողովակ-հենասյունների, մետաղյա փոքր դարպասի տեղադրման մասին ու կից գրառել, որ Դիլիջան համայնքի աղբավայրը ցանկապատվում է: Դավիթ Սարգսյանը Դիլիջան համայնքը ղեկավարում է 2021թ. փետրվարի 26-ից, նա անցած 5,5 տարում Դիլիջան համայնքի համար կարեւոր շատ խնդիրներ չի լուծել: Դրանք մասամբ լուծվում են հոկտեմբերի 25-ին կայանալիք Դիլիջան համայնքի ավագանու համամասնական ընտրություններից առաջ: Այդ խնդիրները լուծում են, որպեսզի այդ ընտրություններում ՔՊ-ն հաղթի:

Դիլիջան քաղաքի կենտրոնում հառնող մշակույթի պալատում նորոգման աշխատանքները «Արտդիանշին» ՍՊԸ-ն 2022թ. դեկտեմբերին է սկսել, սակայն այդ գործը ձախողել է, նորոգումը կիսատ է մնացել: Այդ սուբվենցիոն ծրագրի արժեքը շուրջ 283 միլիոն դրամ է, գումարի 60 տոկոսը Դիլիջան համայնքի ներդրումն է, մնացածը՝ պետական բյուջեի: Մշակույթի պալատում տեղակայված է քաղաքային գրադարանը, որի հազարավոր գրքեր, պարկերի մեջ դարսված, գտնվում են պալատի առաջին հարկում:

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին դեռեւս 2024-ին հարցում եմ արել մարզում հետաձգված սուբվենցիոն ծրագրերի մասին: Մարզպետարանից հայտնել են. «ՀՀ Տավուշի մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերը մշտադիտարկվում են ինչպես մարզպետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի, այնպես էլ ՏԿԵՆ-ի համապատասխան մասնագետների կողմից: 2024 թվականին մշտադիտարկման են ենթարկվել ինչպես 2024 թվականի, այնպես էլ նախորդ տարիներին հաստատված եւ 2024 թվական տեղափոխված ծրագրերը: Մշտադիտարկման թիվը գերազանցում է 250-ը, ծրագրերից մեկում առկա է ժամկետի ուշացում (Դիլիջանի մշակույթի տան հիմնանորոգում), որի համար ձեռնարկվել են միջոցներ՝ 2025 թվականի առաջին եռամսյակում ավարտելու համար»: 2026 թվականի սեպտեմբերն է, նոր են վերսկսել Դիլիջանի մշակույթի պալատի նորոգումը:

Կարեւոր հիմնախնդիր է նաեւ Դիլիջան համայնքի աղբավայրի վատ վիճակը: Դիլիջանի աղբավայրը ցանկապատված չէ, այնտեղ առկա քիմիական,թունավոր նյութերով սնվում են աղբավայրում արածող դիլիջանցիների կովերը: Այդ աղբավայրում հաճախ հրդեհներ են լինում, դրանք պատահական չեն բռնկվում: Աղբավայրի հրդեհների հետեւանքով ծուխը, ծանր հոտը տարածվում են միջպետական ավտոճանապարհին, Աղստեւ գետի հովտում: Փրկարար ծառայությունը, էկոպարեկային ծառայությունը, բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը պարտավոր են Դիլիջանի աղբավայրի հաճախակի հրդեհների կապակցությամբ համարժեք միջոցներ ձեռնարկել, սակայն չեն ձեռնարկում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԻՆՉ ՈՒՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ArmLur.am-ը շարունակում է ուսումնասիրել պաշտոնատար անձանց ունեցվածքները եւ դրանք ներկայացնել հանրությանը: Այս անգամ ուսումնասիրել ենք Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գոհար Գրիգորյանի՝ 2025 թվականի տարեկան հայտարարագիրը:

Գոհար Գրիգորյանը դատավորի պաշտոնը ստանձնել է 2023 թվականի նոյեմբերի 14-ին:

Անշարժ գույք

2025 թվականի հայտարարագրում Գոհար Գրիգորյանի անունով սեփականության իրավունքով անշարժ գույք նշված չէ: Սակայն հայտարարագրից պարզ է դառնում, որ նա հաշվետու տարվա ընթացքում 90 եւ ավելի օր փաստացի տիրապետել է Երեւանում գտնվող բնակարանի:

Հայտարարագրում նաեւ նշված է, որ բնակարանի նկատմամբ Գրիգորյանը փաստացի տիրապետում կամ օգտվում է, սակայն դրա սեփականատիրոջ տվյալները պաշտպանված են:

Միաժամանակ, դատավորի 2025 թվականի հայտարարագրում արձանագրված է 11 մլն 980 հազար դրամի ծախս՝ անշարժ գույքի վերանորոգման համար:

Գոհար Գրիգորյանը հայտարարագրել է 2020 թվականի արտադրության Mazda մակնիշի մարդատար ավտոմեքենա: Ավտոմեքենան նա ձեռք է բերել 2022 թվականի մարտի 24-ին՝գնման եղանակով:

Եկամուտ

2025 թվականին դատավոր Գոհար Գրիգորյանի հայտարարագրած ընդհանուր եկամուտը կազմել է 23 մլն 542 հազար 683 դրամ:

Դրանից 12 մլն 926 հազար 300 դրամը յուն՝ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի՝ Դատական դեպարտամենտի կողմից:

Երեւանի պետական համալսարանից աշխատանքի վարձատրության տեսքով նա ստացել է եւս 681 հազար 604 դրամ, իսկ Հայաստանի Հանրապետության նոտարական պալատից՝ քաղաքացիաիրավական այլ պայմանագրից ստացված 87 հազար դրամ եկամուտ:

Բացի այդ, Գոհար Գրիգորյանը 2025 թվականին ստացել է 900 հազար 432 դրամ եկամտային հարկի վերադարձ:

Նրա հայտարարագրում առանձին նշված են նաեւ ստացված վարկերը՝«Ամերիաբանկից»՝5 մլն 828 հազար 547 դրամ, «ՎՏԲ-Հայաստան բանկից»՝1 մլն 890 հազար դրամ եւ 817 հազար 800 դրամ, իսկ «Ինեկոբանկից»՝411 հազար դրամ:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Գոհար Գրիգորյանի վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը կազմել է ընդհանուր 39 մլն 178 հազար 422 դրամ:

Վարկի մեծ մասը կապված է անշարժ գույքի գնման հետ:

Դրամական միջոցներ

Դատավորի բանկային հաշիվների մնացորդները տարվա ընթացքում փոփոխվել են: Տարվա սկզբում չորս բանկային հաշիվներում առկա է եղել համապատասխանաբար 0 դրամ, 72 հազար 29.6 դրամ, 138 հազար 807.17 դրամ եւ 500 հազար 652.7 դրամ, իսկ տարեվերջին՝ 207 հազար 142 դրամ, 72 հազար 29.6 դրամ, 23 հազար 328 դրամ եւ 44 հազար 342 դրամ:

Բացի այդ, տարվա սկզբում եւ վերջում նրա բանկային ավանդներից մեկում առկա է եղել 2 մլն դրամ, որը տարվա վերջում զրոյական է դարձել, իսկ մյուս ավանդում տարվա սկզբի 5 հազար դոլարի փոխարեն տարեվերջին առկա է եղել 5 հազար 152 դրամ:

Գոհար Գրիգորյանը նաեւ հայտարարագրել է 700 դոլար եւ 1 մլն 200 հազար դրամ կանխիկ դրամական միջոցներ, որոնք տարվա ընթացքում չեն փոփոխվել:

Այսպիսով, հայտարարագրից երեւում է, որ 2025 թվականին դատավոր Գոհար Գրիգորյանը ունեցել է 23 մլն 542 հազար 683 դրամ ընդհանուր եկամուտ, 11 մլն 980 հազար դրամի վերանորոգման ծախս, 2020 թվականի Mazda, ինչպես նաեւ տարեվերջի դրությամբ՝ 39 մլն 178 հազար 422 դրամի վարկային պարտավորություններ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

ՉԻ ԶՂՋՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՐ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ չի զղջում Իրանի դեմ պատերազմ սկսելու համար՝ չնայած այն ազդեցությանը, որ հակամարտությունը կարող է ունենալ ԱՄՆ-ում նոյեմբերին կայանալիք Կոնգրեսի միջանկյալ ընտրությունների վրա: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին նա ասել է Fox News-ի հետ հարցազրույցում:

Հաղորդավարուհի Լորա Ինգրահամը հարց է ուղղել՝ արդյոք Թրամփը զղջում է Իրանի դեմ պատերազմի համար՝ հաշվի առնելով ընտրությունների վրա դրա հնարավոր ազդեցությունը:

«Ես չեմ ընդունում «զղջում» բառը: Միշտ էլ կարող ես կասկածել ինքդ քեզ, - ասել է նա: - Եթե ստիպված լինեի կրկին անել դա, ճիշտ նույն կերպ կվարվեի»:

Թրամփը մերժել է այն պնդումները, թե իր որոշ կողմնակիցներ վրդովված եւ ընկճված են պատերազմի պատճառով:

«Չեմ կարծում, թե նրանք ընկճված են: Կարծում եմ՝ նրանք շատ հպարտ են այն փաստով, որ ես թույլ չեմ տալիս Իրանին միջուկային զենք ունենալ», - ասել է Թրամփը:

Նա կրկնել է իր այն կանխատեսումը, որ պատերազմը կավարտվի անմիջապես միջանկյալ ընտրություններից հետո:

Սեպտեմբերի 9-ին նույնպես նա նման կանխատեսում էր արել՝ ենթադրելով, որ Թեհրանը փորձում է ազդել ընտրությունների վրա:

ԵՌՕՐՅԱ ԱՅՑ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը եռօրյա աշխատանքային այցով ժամանել է Հնդկաստան, հաղորդում է ՌԻԱ Նովոստին:

Նրան դիմավորել է Հնդկաստանի արտաքին գործերի պետնախարար Կիրտի Վարդհան Սինգհը:

Ռուսաստանի նախագահը սեպտեմբերի 11-13-ը Նյու Դելհիում կմասնակցի BRICS գագաթնաժողովին:

Ուրբաթ Պուտինը կհանդիպի Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիի հետ: Բանակցություններից հետո նրանք համատեղ կայցելեն «Իննոպրոմ. Հնդկաստան» միջազգային արդյունաբերական ցուցահանդես: Այդ օրը Պուտինը, այլ առաջնորդների հետ ելույթ կունենա BRICS բիզնես ֆորումում:

Տասնութերորդ գագաթնաժողովի հիմնական ծրագիրը կսկսվի շաբաթ: Կենտրոնական միջոցառումը կլինի ասոցիացիայի պետությունների ղեկավարների հանդիպումը: Ակնկալվում է, որ հիմնական պայմանավորվածությունները կարտացոլվեն համատեղ հռչակագրում:

ԲՐԻԿՍ-ի բազմակողմանի միջոցառումներից բացի, Պուտինի հաջորդ երկու օրվա գրաֆիկը կներառի բազմաթիվ երկկողմ հանդիպումներ: Մասնավորապես, նա բանակցություններ կվարի Հարավաֆրիկյան Հանրապետության նախագահ Սիրիլ Ռամաֆոսայի, Մալայզիայի վարչապետ Անվար Իբրահիմի, Եթովպիայի վարչապետ Աբի Ահմեդի եւ Աբու Դաբիի թագաժառանգ շեյխ Խալեդ բին Մոհամմեդ ալ Նահյանի հետ:

Ռուսաստանի ղեկավարը կհանդիպի նաեւ BRICS-ի նոր զարգացման բանկի ղեկավար Դիլմա Ռուսեֆի հետ: Պլանավորվում է նաեւ Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթթահ աս-Սիսիի հետ բանակցություններ վարելու հնարավորությունը:

Կիրակի նախատեսված է BRICS+ ընդլայնված հանդիպում, որին Պուտինը կմասնակցի BRICS-ի մյուս առաջնորդների եւ գործընկեր երկրների ներկայացուցիչների հետ:

● *Մարզերում օգոստոսի 31-ից սեպտեմբերի 7-ը ձերբակալվել ու համայնքային ոստիկանության տարածքային բաժիններ է տարվել 27 անձ:*

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐԱՆՎԱՆՎԱԾ «ԹՈՒՄԱՆՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ՝ ՆՈՐ ՀԱՍՑԵՈՒՄ

«Մոսկվա» կինոթատրոնի շենքում տեղակայված Յունիբանկի մասնաճյուղը տեղափոխվել է նոր հասցե եւ վերանվանվել «Թումանյան»: Մասնաճյուղի նոր հասցեն է՝ Երեւան, Թումանյան փողոց 24, տարածք 49:

Մասնաճյուղի ավելի ընդարձակ տարածքը հնարավորություն է տալիս սպասարկել հաճախորդների աճող հոսքը եւ ապահովել սպասարկման հարմարավետ պայմաններ: «Թումանյան» մասնաճյուղում հասանելի է բանկային ծառայությունների լայն շրջանակ՝ բանկային հաշիվների բացում, քարտերի, ավանդների եւ վարկերի ձեւակերպում, դրամական փոխանցումներ, արտարժույթի փոխանակում եւ այլ գործառնություններ: Մասնաճյուղի աշխատանքային գրաֆիկն է՝ երկուշաբթիից ուրբաթ՝ 09:30-ից 16:30, շաբաթ եւ կիրակի՝ ոչ աշխատանքային օրեր:

Մասնաճյուղային ցանցի զարգացումը շարունակում է մնալ Յունիբանկի՝ բանկային ծառայությունների հասանելիության բարձրացման ռազմավարության կարեւոր ուղղություններից մեկը: Բանկը հետեւողականորեն զարգացնում է սպասարկման ժամանակակից ձեւաչափերը՝ համատեղելով թվային բանկինգի հնարավորությունները մասնաճյուղերում սպասարկման հետ, որտեղ հաճախորդները կարող են ստանալ մասնագետի խորհրդատվություն եւ աջակցություն ֆինանսական հարցերի լուծման գործում: *(Գ)*

ԿԱՍԵՑՎԵԼ Է

ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողական գործողությունների շրջանակում բենզինի եւ դիզելային վառելիքի վաճառքով զբաղվող «ԳԱՎԱԼԳ» ՍՊԸ-ին պատկանող լցակայանում (հասցե՝ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Գործարանային 16/6) հայտնաբերվել են խախտումներ:

Մասնավորապես, վերահսկողական գործողությունների արդյունքում հայտնաբերվել է թերլիցքավորում. կասեցվել է թերլիցքավորմամբ շահագործվող բենզինի վառելիքաբաշխիչ աշտարակի գործունեությունը:

Կազմակերպության տնօրենին հանձնարարվել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ խախտումները վերացնելու ուղղությամբ:

Տնտեսվարող սուբյեկտը կենթարկվի վարչական պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Կոնվերս Բանկի նախաձեռնությամբ քննարկվել են հայ-լեհական առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարները:

Կոնվերս Բանկը՝ լեհական Bank Pekao-ի հետ, կազմակերպել էր հանդիպում պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Լեհաստանի պատվիրակության ներկայացուցիչների հետ: Պատվիրակության կազմում են Լեհաստանի պետական համակարգի եւ բիզնես, ֆինանսական համայնքների ներկայացուցիչներ: Քննարկվել են երկկողմ տնտեսական համագործակցության, բիզնեսի ֆինանսավորման եւ միջազգային առեւտրի զարգացման հարցեր: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հայ-լեհական առեւտրի ներուժին եւ երկու երկրների բանկերի միջեւ ուղիղ համագործակցության ձեւավորմանը:

Հանդիպմանը ողջույնի խոսքով հանդես է եկել Կոնվերս Բանկի գլխավոր գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ Հրանտ Հակոբյանը: Նա կարեւորել է ֆինանսական կառույցների դերակատարությունը հայ-լեհական տնտեսական հարաբերությունների զարգացման գործում՝ ընդգծելով, որ բանկերի միջեւ ամուր գործընկերությունը կնպաստի նաեւ երկու երկրների գործարար համայնքների միջեւ երկարաժամկետ կապերի ձեւավորմանը:

Բանկային կամուրջ՝ հայ-լեհական տնտեսական կապերի համար

Կոնվերս Բանկի գլխավոր տնտեսագետ, Հետազոտությունների եւ վերլուծությունների բաժնի ղեկավար Արեգ Սարգսյանը ներկայացրել է Հայաստանի մակրոտնտեսական զարգացումները, արտաքին առեւտրի կառուցվածքային փոփոխությունները ու արտահանման շուկաների դիվերսիֆիկացման հնարավորությունները:

Նա նշել է. «2026 թվականի առաջին յոթ ամիսներին Հայաստանից Եվրոպական միություն արտահանումն աճել է 70.7%-ով: Սակայն հայ-լեհական տնտեսական հարաբերությունների ներուժը դեռեւս լիարժեք իրացված չէ: Լեհաստանի ներկայիս դիրքի եւ իրական ներուժի միջեւ առկա բացը Կոնվերս Բանկը կարող է լրացնել լեհական գործընկեր բանկերի հետ համատեղ»:

Հայաստանը լեհական բիզնեսի համար գրավիչ ուղղություն է դառնում

Bank Pekao-ի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Լուկաշ Յանուշեւսկին շնորհակալություն է հայտնել Կոնվերս Բանկին ջերմ ընդունելության համար: Նա նշել է. «Սա կարեւոր եւ արդյունավետ հանդիպում էր, քանի որ լեհ գործարարները հնարավորություն ստացան ծանոթանալ ոչ միայն ՀՀ բանկային համակարգում առեւտրի ֆինանսավորման գործիքակազմին եւ Կոնվերս Բանկի առաջարկներին, այլեւ ընդհանուր տնտեսական զարգացումներին, երկկողմ համագործակցության հնարավոր ուղղություններին»:

Ֆինանսական լուծումներ՝ երկու երկրների գործարարների համար

Կոնվերս Բանկը եւ Bank Pekao-ն Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի բանկային ասոցիացիայի՝ BACEE-ի անդամներ են: Բանկերի միջեւ համագործակցությունը կարող է ներառել թղթակցային հարաբերությունների հաստատում, առեւտրի ֆինանսավորման գործիքներ, արժութային գործառնություններ եւ գործարար կապերի խթանում:

Կոնվերս Բանկի ֆինանսական հաստատությունների եւ միջազգային բանկային հարաբերությունների վարչության ղեկավար Նելլի Քոչարյանն ասել է. «Կոնվերս Բանկը հետեւողականորեն ընդլայնում է միջազգային գործընկերային ցանցը: Bank Pekao-ի հետ համագործակցությունն այս ուղղությամբ իրականացվող աշխատանքի տրամաբանական շարունակությունն է, որը թույլ կտա ձեւավորել հայ-լեհական առեւտրի զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական ենթակառուցվածք: Այն հայաստանյան ընկերություններին հնարավորություն կտա ավելի վստահ մուտք գործել Լեհաստանի եւ եվրոպական շուկաներ, իսկ լեհական ընկերություններին՝ Հայաստանում ունենալ վստահելի գործընկեր»:

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ԼՈՒՐԵՐ

TEAM–Ը՝ ԳՈՐԾԸՆԿԵՐ

11 սեպտեմբերի, 2026 թ., Երեւան. 16 պրոֆեսիոնալ թիմ աշխարհի տարբեր երկրներից. Հայաստանում առաջին անգամ անցկացվում է Tour of Armenia միջազգային պրոֆեսիոնալ բազմօրյա հեծանվավազքը, որի տեխնոլոգիական գործընկերը Team Telecom Armenia-ն է:

Միջազգային մրցաշարն անցկացվում է չորս մրցափուլով, որոնց ընթացքում շուրջ 300 մասնակիցներն անցնում են ընդհանուր 568 կմ՝ հաղթահարելով շուրջ 5300 մետր վերելք: Մրցուղիներն անցնում են Հայաստանի տարբեր մարզերով եւ ճանապարհներով, իսկ մրցաշարի եզրափակիչ փուլը կանցկացվի Երեւանում:

Tour of Armenia-ի անցկացումը կարեւոր իրադարձություն է Հայաստանի մարզական կյանքի համար, քանի որ առաջին անգամ Հայաստանում հյուրընկալվել է միջազգային մակարդակի պրոֆեսիոնալ հեծանվային մրցաշար: Այն միաժամանակ նոր հարթակ է հայկական հեծանվային սպորտի զարգացման, տեղացի մարզիկների միջազգային փորձի ընդլայնման եւ Հայաստանի՝ որպես սպորտային ուղղության ներկայացման համար: Մրցաշարի միջազգային հեռարձակումը հնարավորություն կտա աշխարհի տարբեր երկրներում հեծանվասպորտի երկրպագուներին հետեւելու մրցմանը եւ դրա միջոցով բացահայտելու Հայաստանը:

«Միջազգային մասշտաբի միջոցառումների անցկացումն այսօր անհնար է առանց հուսալի կապի եւ ժամանակակից տեխնոլոգիական լուծումների: Tour of Armenia-ն կարեւոր իրադարձություն է Հայաստանի համար ոչ միայն սպորտային, այլեւ միջազգային տեսանելիության առումով: Ուրախ ենք լինելու այս մրցաշարի տեխնոլոգիական գործընկերը եւ մեր հնարավորություններով նպաստելու դրա բարձր մակարդակով անցկացմանը: Team-ի համար կարեւոր է աջակցել այն նախաձեռնություններին, որոնք Հայաստանը կապում են միջազգային հարթակների հետ եւ նոր հնարավորություններ ստեղծում երկրի, սպորտի ու հասարակության զարգացման համար»,-նշում է Team Telecom Armenia-ի կոմերցիոն տնօրեն Տիգրան Ֆրանգյանը:

«Նման մասշտաբի միջազգային մրցաշարի կազմակերպումը շատ ավելին է, քան պարզապես մրցութային չորս օրերի անցկացումը: Tour of Armenia-ն բացառիկ հնարավորություն է Հայաստանը միջազգային հարթակում ներկայացնելու՝ իր հարուստ բնությամբ, պատմամշակութային ժառանգությամբ եւ զբոսաշրջային մեծ ներուժով:

Այս ամենն աշխարհին պատշաճ եւ անխափան ներկայացնելու համար կարեւոր է նաեւ վստահելի տեխնոլոգիական ենթակառուցվածքն ու աջակցությունը: Ուրախ ենք, որ Tour of Armenia-ի տեխնոլոգիական գործընկերն է Team Telecom Armenia-ն»,-նշում է Սպորտի կառավարման կենտրոնի տնօրեն Խորեն Զարգարյանը:

Team Telecom Armenia-ն, լինելով ազգային օպերատոր, շարունակելու է իր ներդրումն ունենալ երկրի ճանաչելիության բարձրացմանն ու միջազգային հարթակներում հայկական ներուժը ներկայացնելուն միտված նախաձեռնություններում:

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏԵԼ Է

Կոնվերս Բանկը կրկին նախատեսված ժամկետից շուտ ավարտել է Գլոբբինգի դոլարային պարտատոմսերի տեղաբաշխումը: Տեղաբաշխվել են 2 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով պարտատոմսեր՝ տարեկան 8.25% արժեկտրոնային եկամտաբերությամբ եւ 3 տարի շրջանառության ժամկետով:

Ներգրավված միջոցները նախատեսվում է ուղղել Գլոբբինգի զարգացման եւ հետագա աճի խթանմանը միտված ծրագրերին: Կոնվերս Բանկում փաստել են, որ Բանկի ներդրումային առաջարկները պահանջարկ են վայելում ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձ ներդրողների կողմից, ինչն ազդակ է շարունակելու հանդես գալ նոր թողարկումներով:

Տեղաբաշխման ավարտից հետո պարտատոմսերը կներկայացվեն Հայաստանի ֆոնդային բորսա ցուցակման համար:

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

CMA AWARDS 2026

ԹԵՅԼՈՐ ՍՎԻՖԹԸ ՆԵՐԿԱ ԿԼԻՆԻ

Թեյլոր Սվիֆթը հաստատել է, որ ներկա կլինի 2026 թվականի երաժշտության ասոցիացիայի մրցանակ-ին՝ CMA Awards-ին: Երգչուհու մասնակցությունը հատկապես ուշագրավ է, քանի որ նա մրցանակաբաշխությանը վերջին անգամ ներկա է եղել 2016 թվականին:

Սեպտեմբերի 10-ին Instagram Stories-ում 36-ամյա փոփ աստղը կիսվել է CMA Awards-ի եւ ABC-ի հրապարակմամբ՝ հայտնելով, որ նոյեմբերի 18-ին ներկա կլինի «Քանթրի երաժշտության ամենամեծ գիշերին»: «Կարծես թե ես դեռ վերջին YEE'D MY LAST HAW-ս չեմ ասել: ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, CMA!!!! Կհանդիպենք այնտեղ՝նոյեմբերի 18-ին...», - գրել է Սվիֆթը:

Այս տարի երգչուհին առաջադրվել է «Տարվա սինգլ» անվանակարգում իր «I Knew It, I Knew You» երգի համար: Երգը գրվել է «Toy Story 5» ֆիլմի սաունդթրեքի համար, իսկ դրա պրոդյուսերը Ջեք Անտոնոֆն է, ինժեներական աշխատանքներն իրականացրել է Լորա Սիսկը:

«I Knew It, I Knew You»-ն վերջերս նաեւ առաջին հորիզոնականն է գբաղեցրել ԱՄՆ-ի քանթրի ռադիոկայանների չարթում: Սա Սվիֆթի համար դարձել է առաջին նման հաջողությունը վերջին 13 տարվա ընթացքում:

Երգչուհու համար այս հաջողությունն ունի նաեւ խորհրդանշական նշանակություն. «I Knew It, I Knew You»-ն նրա՝ որպես մենակատարի, 13-րդ երգն է, որը գլխավորել է ԱՄՆ-ի քանթրի ռադիոյի չարթը, իսկ ընդհանուր հաշվով՝ 14-րդը:

13-րդ CMA մրցանակի հնարավորությունը

Թեյլոր Սվիֆթն իր կարիերայի ընթացքում արդեն արժանացել է 12 CMA մրցանակի: Նրա առաջին խոշոր CMA հաղթանակներից մեկը եղել է 2007 թվականին, երբ նա ստացել է Horizon Award-ը, որն այսօր հայտնի է որպես «Տարվա նոր արտիստ» մրցանակ:

Սվիֆթը նախկինում երկու անգամ՝2009 եւ 2011 թվականներին, հաղթել է «Տարվա ժամանցի գործիչ» անվանակարգում: Նա նույն մրցանակի համար առաջադրվել էր նաեւ 2012 եւ 2013 թվականներին:

2016 թվականին Սվիֆթը վերջին անգամ մասնակցեց CMA Awards-ին՝ բեմ բարձրանալով եւ Գարթ Բրուքսին հանձնելով «Տարվա ժամանցի գործիչ» մրցանակը:

Եթե այս տարի նա հաղթի «Տարվա սինգլ» անվանակարգում, դա կլինի նրա 13-րդ CMA մրցանակը:

Ո՞ւմ հետ է մրցելու Սվիֆթը

«Տարվա սինգլ» անվանակարգում Սվիֆթի «I Knew It, I Knew You»-ի մրցակիցներն են Էլլա Լենգլիի «Be Her» եւ «Choosin' Texas» երգերը, Լեյնի Ուիլսոնի «Somewhere Over Laredo»-ն եւ Քոդի Ջոնսոնի «The Fall»-ը:

2026 թվականի CMA Awards-ի առաջադրումները հայտարարվել են սեպտեմբերի 10-ին: Ամենաշատ՝10 անվանակարգով առաջադրվել է Էլլա Լենգլին: Նրան հաջորդում է Միրանդա Լամբերտը՝ յոթ անվանակարգով:

Քեյսի Մասգրեյվսը եւ Բեն Ուեսթը ստացել են հինգական անվանակարգ, իսկ Քոդի Ջոնսոնը, Քրիս Սթեփլթոնը եւ Սթիվեն Ուիլսոն կրտսերը նույնպես առաջադրվել են հինգ անվանակարգում:

«Տարվա ժամանցի գործիչ» գլխավոր մրցանակի համար պայքարելու են Լյուք Քոմբսը, Քոդի Ջոնսոնը, Էլլա Լենգլին, Քրիս Սթեփլթոնը եւ Լեյնի Ուիլսոնը:

2026 թվականի CMA Awards-ը կլինի մրցանակաբաշխության 60-րդ հոբելյանական արարողությունը: Այն կանցկացվի նոյեմբերի 18-ին Նեշվիլի Bridgestone Arena-ում եւ ուղիղ եթերով կհեռարձակվի ABC հեռուստաալիքով: Երեկոն վարելու է Լեյնի Ուիլսոնը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄՐՑԱՆԱԿԸ ՎՆԱՍՈՒՄ Է ՖՈՒՏԲՈԼԻՆ

Ֆրանսիայի հավաքականի եւ «Բարսելոնայի» նախկին պաշտպան Սամուել Ումտիտին խստորեն քննադատել է «Ոսկե գնդակ» մրցանակաբաշխությունը՝նշելով, որ այն կորցրել է իր իմաստն ու մեծ վնաս է հասցնում ֆուտբոլին, հայտնում է armsport-ը:

Օրերս France Football-ը հրապարակեց տարվա լավագույն ֆուտբոլիստի կոչման 30 հավակնորդների անունները: Մինչ այդ, Մադրիդի «Ռեալի» հարձակվող Կիլիան Մբապեն հայտարարել էր, որ անձամբ իրեն կտար այդ մրցանակը՝հիմնվելով սեփական վիճակագրության վրա: RMC Sport-ի եթերում Ումտիտին չի շրջանցել այս հայտարարությունը.

«Մբապեն ինքնավստահ մարդ է, բայց, թերեւս, նրան պետք չէր այդ մասին խոսել: Նա պետք է կենտրոնանա դաշտում կատարվող իրադարձությունների վրա: Բոլորն են տեսնում նրա խփած գոլերն ու լավ խաղը, բայց եթե նրան հարցնես, թե ում կտար մրցանակը, նա կնշի իր անունը: Ինձ, օրինակ, դա դուր չի գալիս: Հարձակվողները պաշտում են «Ոսկե գնդակը», բայց ակնհայտ է, որ այն պարտադիր չէ, որ հենց նրան բաժին հասնի»,- նշել է պաշտպանը:

Աշխարհի 2018 թվականի չեմպիոնին զարմացրել է նաեւ հավակնորդների ցուցակը եւ ֆուտբոլիստների սեւեռվածությունը անհատական նվաճումների վրա.

«Ցուցակում ընդգրկել են Խուլիան Կինյոնեսին, բայց ի՞նչ է նա արել Աշխարհի առաջնությունում (4 գոլ Մեքսիկայի կազմում, որը դուրս մնաց 1/8 եզրափակիչից - խմբ.): Երբ տեսա դա, մտածեցի՝ կատակ է: Անկեղծ ասած, ես նույնիսկ չեմ էլ դիտելու այդ արարողությունը: Հարձակվողների համար այն շահելը երազանք է, բայց արարողությունը կորցրել է ցանկացած իմաստ եւ վնասում է ֆուտբոլին, որը խիստ թիմային մարզաձեւ է: Մարդիկ հիմա շատ ավելին մտածում են «Ոսկե գնդակ» շահելու, քան թիմային տիտղոսների մասին:

Կարող ես թիմիդ հետ հաղթել Չեմպիոնների լիգան, բայց մտածել միայն քո մասին: Մենք նորից սկսել ենք խոսել միայն վիճակագրությունից, բայց դա բավարար չէ: Ֆուտբոլը միայն թվեր չեն»:

Եզրափակելով իր խոսքը՝ Ումտիտին խոստովանել է, որ դադարել է հետաքրքրվել մրցանակով Լիոնել Մեսսիի եւ Կրիշտիանու Ռոնալդուի լավագույն տարիներից հետո.

«Նրանք անհավանական վիճակագրություն ունեին, եւ եթե անգամ խոշոր տիտղոս չէին նվաճում, դա այնքան էլ կարեւոր չէր, քանի որ նրանց անցկացրած մրցաշրջաններն ուղղակի ցնցող էին: Իսկ հիմա պարտադիր չէ առանձնացնել մեկ գերազանցող ֆուտբոլիստի»:

ՏԵՂԱՓՈԽՎԵՑ

Հայաստանի ազգային հավաքականի եւ Երեւանի ԲԿՄԱ-ի 20-ամյա եզրային կիսապաշտպան Նարեկ Հովհաննիսյանը կարիերան կշարունակի Լեհաստանում: Այս մասին հայտնում է Գդանսկի «Լեխիայի» մամուլի ծառայությունը, փոխանցում է armsport-ը: Հայ ֆուտբոլիստն ու լեհական ակումբը կնքել են երկարաժամկետ պայմանագիր, որն ուժի մեջ կլինի մինչեւ 2031 թվականի հունիսի 30-ը:

«Լեխիայի» պաշտոնական կայքը հիշեցնում է, որ Հայաստանի Պրեմիեր լիգայի 2025/26 մրցաշրջանում Հովհաննիսյանն անցկացրել է 26 հանդիպում եւ դարձել 8 գոլի հեղինակ:

20-ամյա կիսապաշտպանն արդեն հասցրել է նորամուտը նշել Հայաստանի ազգային հավաքականում, որի մարզաշապիկով մինչ օրս անցկացրել է 2 հանդիպում: Նախկինում նա պարբերաբար հանդես է եկել երկրի տարբեր տարիքային հավաքականներում:

«Բարի գալուստ Գդանսկ, Նարեկ: Քեզ հաջողություն ենք մաղթում սպիտականաչների կազմում»,- գրված է ակումբի տարածած հայտարարության մեջ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅՏՆԻ Է՝ ՈՐՔԱՆ Է ՎՃԱՐԵԼ

Լեհական «Լեխիա Գդանսկը» տրանսֆերային պատուհանի վերջին օրերին ակտիվորեն համալրել է կազմը՝ պայմանագրեր կնքելով երկու հայ ֆուտբոլիստների՝ Արթուր Սերոբյանի եւ Նարեկ Հովհաննիսյանի հետ, գրում է armsport-ը:

Լեհական Trgjmiasto.pl պորտալի տեղեկություններով՝ «Լեխիան» Երեւանի «Արարատ-Արմենիայից» 1 միլիոն եվրոյի դիմաց գնել է 23-ամյա վինգեր Արթուր Սերոբյանի տրանսֆերային իրավունքը:

Այդուհանդերձ, Սերոբյանն անմիջապես վարձավճարով վերադարձել է Հայաստանի չեմպիոնի կազմ եւ լեհական թիմին կմիանա միայն հաջորդ տարվա փետրվարի 1-ին:

Ջուգահեռաբար, լեհական ակումբը ձեռք է բերել Երեւանի ԲԿՄԱ-ի 20-ամյա եզրային խաղացող Նարեկ Հովհաննիսյանին: Ըստ շրջանառվող լուրերի՝ այս տրանսֆերի համար «Լեխիան» վճարել է 200-250 հազար եվրո: Ի տարբերություն Սերոբյանի՝ Հովհաննիսյանն արդեն հինգշաբթի օրը կմիանա իր նոր թիմին:

Ընդհանուր առմամբ, այս ամառային տրանսֆերային պատուհանի ընթացքում Գդանսկը ներկայացնող ակումբն իրականացրել է 13 մուտքային տրանսֆեր: Հայ ֆուտբոլիստներից բացի՝ թիմը համալրել են հետեւյալ խաղացողները.

Հարձակման գիծ եւ վինգերներ. Վլադիսլավ Բլանուտա, Խավիեր Մենա, Կեւին Դոդայ, Արթուր Շախ:

Կիսապաշտպանություն. Քրիստո Իվանով, Յակուբ Ադկոնիս:

Պաշտպանություն եւ դարպաս. Կացպեր Լոպատա, Դանիլո Բեսկորովայնի, Դանիլո Մալով, Սամուել Կոպասեկ եւ դարպասապահ Աքսել Հոլեւինսկի:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏՎԵԼ

Թուրքական «Ֆեներբահչեի» գլխավոր մարզիչ Իսմայիլ Քարթալը Չեմպիոնների լիգայի լիգայի փուլում հռոմեական «Ռոմայի» հետ ոչ-ոքիից (1:1) անմիջապես հետո հրաժարական է տվել:

Մրցաշարի առաջին տուրի հանդիպումը կայացել է սեպտեմբերի 10-ին Ստամբուլի «Ծյուքրյու Սարաջօղլու» ստադիոնում:

Խաղը սպասարկում էր իսպանացի մրցավար Խեսուս Խիլ Մանսանոյի գլխավորած բրիգադը:

«Հրաժարական եմ տալիս, քանի դեռ նման հնարավորություն կա, եւ այն պայմանով, որ այլեւս երբեք չեմ վերադառնա: Բոլորիդ բարի երեկո եմ մաղթում»,- հետխաղյա մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է թուրքական ակումբի արդեն նախկին գլխավոր մարզիչը:

Մասնագետն իր այս կտրուկ որոշման հստակ պատճառները չի բարձրաձայնել, գրում է armsport-ը:

Նշենք, որ ՉԼ-ի 2-րդ տուրում «Ֆեներբահչեն» կմրցի «Ասթոն Վիլայի» հետ, իսկ «Ռոման» կհանդիպի Մադրիդի «Ռեալին»: Երկու խաղերն էլ նախատեսված են հոկտեմբերի 14-ին:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում սեպտեմբերի 24-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «Օպերային գոհարներ» համերգը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞րն է համարվում կրթության գծով սոցիալական ծախս:

Դավիթ Հայրապետյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Կրթության գծով սոցիալական ծախսեր են համարվում՝

1) Հայաստանի Հանրապետությունում իրականացվող նախադպրոցական, տարրական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ), հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ), միջնակարգ (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական եւ հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի մասով կատարված ուսման վճարները.

2) երաժշտական, արվեստի, գեղարվեստի, պարարվեստի դպրոցների, արտադպրոցական կազմակերպությունների, կենտրոնների, մանկապատանեկան մարզադպրոցների եւ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից երաշխավորված այլ արտադպրոցական ծրագրերի, ինչպես նաեւ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից երաշխավորված ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով տրամադրվող կրթական ծառայությունների մասով կատարված ուսման վճարները:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Դատարանից/վարչական մարմնից որեւէ ծանուցում չեմ ստացել, սակայն այդ ակտի հիման վրա կատարողական վարույթ է հարուցվել:

Նարինե Կիրակոսյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարողը որոշում է կայացնում կատարողական վարույթ հարուցելու (վերսկսելու) մասին, եթե բացակայում են կատարողական վարույթի հարուցումը (վերսկսումը) մերժելու հիմքերը:

Նույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝

Պահանջատիրոջ կողմից ներկայացվող հարկադիր կատարման դիմումը պարունակում է՝

5) վարչական ակտը կամ դատախազի որոշումը հարկադիր կատարման ներկայացվելու դեպքում՝ պահանջատիրոջ հայտարարությունը կատարման ենթակա ակտի կատարելիության հատկանիշը սույն օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որեւէ հիմքով ծագած լինելու վերաբերյալ, ինչպես նաեւ նշում տվյալ հանգամանքը տեղի ունենալու օրվա մասին.

Նույն օրենքի 38-րդ հովդածի համաձայն՝

Հարկադիր կատարողը մերժում է հարկադիր կատարման դիմումի հիման վրա կատարողական վարույթի հարուցումը (վերսկսումը), եթե՝

7) չի սկսվել կամ լրացել է կատարողական վաղեմության ժամկետը, եւ առկա չէ այն վերականգնելու մասին դատական ակտ.

Ըստ այդմ, բոլոր այն դեպքերում, երբ կատարողական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցներով կհավաստվի, որ պահանջատիրոջ կողմից հարկադիր կատարման դիմումին կից ներկայացվող վարչական կամ դատական ակտն անբողոքարկելի չէր դարձել հարկադիր կատարման ներկայացնելու պահի դրությամբ, այսինքն չէր սկսվել կատարողական վաղեմության ժամկետը՝ հարկադիր կատարողը պարտավոր կլինի ավարտել կատարողական վարույթը՝ վերացնելով գույքի նկատմամբ կիրառված արգելանքները:

ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի



Նոր Հաճնում 24-ամյա վարորդը ոչ սթափ վիճակում «Kia Forte»-ով բախվել է շատրվանների ջրավազանի բազալտե եզրաքարին, անցել ջրավազանի վրայով եւ բախվել շտապօգնության ավտոմեքենային ու 2 «BMW»-ների:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 + 21 + 26
Կոտայքի լեռներ	+ 4 + 7 + 21 + 25
Կոտայքի նախալեռներ	+ 11 + 13 + 25 + 27
Գեղարքունիք	+ 3 + 8 + 18 + 22
Լոռի	+ 5 + 9 + 20 + 24
Տավուշ	+ 6 + 9 + 21 + 24
Արագածոտնի լեռներ	+ 3 + 6 + 21 + 24
Արագածոտնի նախալեռներ	+ 10 + 14 + 25 + 29

Արարատ	+ 11 + 14 + 27 + 30
Արմավիր	+ 10 + 14 + 28 + 31
Վայոց ձորի լեռներ	+ 4 + 8 + 22 + 25
Վայոց ձորի նախալեռներ	+ 11 + 14 + 28 + 31
Սյունիքի լեռներ	+ 4 + 7 + 16 + 20
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 12 + 21 + 25
Սյունիքի հովիտներ	+ 14 + 16 + 27 + 30
Երեւան	+ 14 + 16 + 29 + 31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.09.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հաբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*